

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2015թ. հուլիսի 10-ին տեղի ունեցած ԳՊՄԻ-ի ֆիզիկամաթեմատիկական և
տնտեսագիտության ֆակուլտետի

ֆակուլտետային խորհրդի թիվ 12 նիստի

Նախագահ՝ ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյան

Ֆակուլտետային խորհրդի քարտուղար՝ Ա. Սահակյան

Նիստին մասնակցում էին ֆակուլտետային բոլոր անդամները:

Օրակարգ՝

1. Առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի արդյունքների ամփոփում՝ ըստ ամբիոնների ուսումնասկան խորհրդատուների վերլուծության
2. Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուի տարեկան հաշվետվություն
3. Ամբիոնների տարեկան հաշվետվություն

Զեկուցող՝ ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյան

1.ԼՄԵՑԻՆ- Մ. Մարգարյանի հաղորդումն առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի արդյունքների ամփոփում՝ ըստ ամբիոնների ուսումնասկան խորհրդատուների վերլուծության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- պրոֆեսոր Հ. Դրմեյանը, պրոֆեսոր Ս. Սարգսյանը, դոցենտ Ա. Մանուկյանը:

Ս. Սարգսյանի կողմից ներկայացվեց, որ մանկավարժական պչակտիկային չհաճախելու, ուսումնական վարձը չվճարելու և անհարգելի բացակայություններ ունենելու պատճառով բուհից հեռացվել են հետևյալ ուսանողները՝

Բիչախչյան Արման Աշոտի (ֆիզիկա 3-րդ կուրս)

Շահինյան Սարգիս Կիրակոսի (Ինֆորմատիկա 3-րդ կուրս)

ՈՐՈՇԵՑԻՆ- Դրական գնահատել առկա համակարգի ուսանողների երկրորդ կիսամյակի արդյունքները:

2. ԼՍԵՑԻՆ- Ս. Սարգսյանի հաղորդումն Որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուի տարեկան հաշվետվության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- պրոֆեսոր Հ. Դրմեյանը, պրոֆեսոր Ս. Սարգսյանը, դոցենտ Ա. Մանուկյանը, ՈԱԿ-ի ֆակուլտետային պատասխանատու Ա. Սահակյանը:

Ա. Սահակյանը ներկայացրեց ՈԱԿ-ի կողմից իրականացված ֆակուլտետային աշխատանքները և արդյունքները: Մասնավորապես առանձնացրեց հետևյալ աշխատանքները.

- ԳՊՄԻ ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական և մասնագիտական որակների գնահատման արդյունքների վերլուծություն
- ԳՊՄԻ վարչական կառույցների գործունեության արդյունավետության գնահատման վերաբերյալ հարցաթերթիկների մշակում, վերլուծություն, իրականացում
- ԳՊՄԻ-ի ուսանողների կողմից մանկավարժական պրակտիկայի արդյունավետության և որակի գնահատման հարցման իրականացում և վերլուծություն

- ԳՊՄԻ-ում գրադարանից ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի բավարարվածության վերաբերյալ հարցման իրականացում և վերլուծություն
- Ուսանողական խորհրդատուների աշխատանքի արդյունավետության գնահատում ֆոկուս խմբերի միջոցով
- Ուսանողներին անհատական և կուրսային աշխատանքի թեմաների տրամադրման վերաբերյալ հարցման իրականացում և վերլուծություն
- ԳՊՄԻ ՈԱԿ-ի կողմից մասնագիտական կրթական ծրագրերի պլանավորման և իրականացման գործընթացների ստուգումների գնահատում և հետադարձ կապ
- ԳՊՄԻ ՈԱԿ-ի կողմից իրականացված ստուգումները գնահատելու և հետադարձ կապ ապահովելու համար իրականացրած հարցումների արդյունքների վերլուծություն և կատարված առաջարկություններ և դիտողություններ

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Բավարար գնահատել ՈԱԿ-ի ֆակուլտետային աշխատանքները:

4.ԼՍԵՑԻՆ՝ Մ. Մարգարյանի հաղորդումն ամբիոնների տարեկան հաշվետվության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ պրոֆեսոր Հ. Դրմեյանը, պրոֆեսոր Ս. Մարգարյանը, դոցենտ Ա. Մանուկյանը, Ա. Մկրտչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Դրական գնահատել 2014-2015 ուս. տարվա ամբիոնների աշխատանքները:

Ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետ

խորհրդի նախագահ՝

Մ. Մարգարյան

Ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետային

խորհրդի քարտուղար՝

Ա. Սահակյան

10.07.2015թ.